

տեղ կը գտնենք ստուար խումբ մի քրմա-
պետաց, վահուռիք, որոնք իրենց սեփական
նուիրական գիւղին մէջ վահագնի պաշտօն
կը մաստուցանէին: Ըստ տեղեկութեան զրու-
ցին, երբ որ Արտաշէս թագաւորն յոյն ա-
րուեստաւորաց շինած առաջին արձանները
բարբարոս աշխարհին մէջ բերաւ, վահուռեաց
ցեղին քրմապետաց խելամուտութեամբ եւ հա-
մաձայն գործեց, եւ նոցա յանձնեց արձան-
ներու փոխադրութեան գործը: Այլ ընդհա-
կառայն Տիգրանայ թագաւորութեան միջոց
բոլորովին կը խզի ընդ մէջ գահուն եւ սե-
զանին եղած միութեան կապն: Տարօնի մէջ
գտնուած քրմական գիւղն, հանդերձ իւր մե-
հեաններով, յարբուսիս կը գրաւուի, եւ քրմ-
մասպետը կը զրկուի իրենց աստիճանէն եւ
իշխանութենէն: Բնաւ անհաւատալի չէ այս
դէպքն, վասն զի յետոյ ժամանակաւ արքունի
աւան երկրորդական ճիւղ մի հրապարակ կ'ել-
նէ իբրեւ ժառանգ տէր Աշտիշատայ: Իսկ
թէ Հերակլէս—վահագնի շատ մեծարուած
արձանն հին կրետացի արուեստաւորի մի
գործն է, հարկ չկայ նկատել զայս իբրեւ
հնարուած կեղծիք մի կամ Մովսիսի եւ կամ
իրեն աղբեր՝ յորմէ առեր է զայն: Արդէն
գիտենք թէ Տիգրանայ ժամանակ որպիսի
առաջին հոսանք մի յունական քաղաքակր-
թութեան մտեր եւ տիրացեր էր հայ ժողո-
ւրդեան բարձր դասակարգին մէջ՝ — Տի-
գրանայ որդին Արտաւազդ թագաւորն յունա-
րէն լեզուով գրքեր կը շարադրէր: — Հե-
տեւորք անկարելի չէ, թէ այս տեղ գործ
ունինք մենք Աշտիշատայ մեհենին հին զը-
բուցի մի հետ, զոր հնարներ եւ տարածեր
էին քումբ եւ աւանդապահը, որպէս զի ա-
նցըրենն ժողովրդեան բարեպաշտ ջերմեռան-
դութիւնը եւ առատաձեռն պարգենները:

Շարայարեշի



ՍՈՒՐԷԱՆԳԱՅ ԲԱԶՄԱՎԵՓԻ

ՆՈՐ ՀԱՐՑԱԿԻՆՔ

1. ԳԱՆԱՌԱԲԱՐԵԱՌՔ ՀԱՅ ԼԵՋՈՒԻ

Ընդհանրապէս բանասիրաց մէջ ընդունուած
է, թէ հին ժամանակները մեր իւրաքանչիւր
մահամեջ ունեցեր են իրենց առամծիմ գաւառա-
բարձրները, որոնք շատ տարբերէին իրարմէ
եւ աշխարհաոճեան կողմէն բարձրաւոր: Արդ կը
փափաքէի զխոնալ, թէ արուեստը այդ հին գա-
ւառաբարձրներմ բնաւ զրակամ մշմարք հա-
սերն եմ ձեռքբերիմ, եւ թէ արդի զամագամ
գաւառաբարձրաւոր ունիմ հմոց հետ ո՛ր եւ է
մմանութիւն կամ աղբոս:

2. ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՄԻՁՔ

Մեր սովորի բարեկամ բանասէրն Կ. Ա.,
ազգային զրակամութեամբ պարապող, կը փա-
փաքի Մոսկովի միջնակարգական ինքնակա-
մալիպի» ըմթեւոյցոց հետեւեալ հարցումը:

«Մեր ազգային պատմիչաց մէջ ո՞րք են, որոնց
կալուղ ենք առաջնութեամբ պատիւը ըմպել»,
1°. Ըստ ըմտրութեան լեզուի եւ շարադրու-
թեան,

2°. Ըստ գեղեցկութեան ոճով եւ զրութեան,

3°. Ըստ արժամանակատեման պատմութեան

միւթոց »:



Է. Հմմտ. Թ. Ռէյնաք, Միհրապետ Երպա-
տոր, էջ 344, եւ այլն:

ՊԱՏԱՍԽԱՆԻՔ

ԲԱԶՄԱՆՎԻՊԻ ՍՈՒՐԶԱՆԴԱԿԻՆ

1. ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՑ ԵՐԿԵՐՆ

(Պատասխան Սոսիալականի յոսնիս առնայ առաջին հարցման)։

Յօժարութեամբ կու գամ պատասխանել նա եւ այդ հարցման, որ սերտ յարաբերութիւն ունի յունիսի պրակին մէջ տպուած Շարականաց խնդրոյն հետ. եւ գտնէ քան զայն աւելի կարեւոր է սրբազան պաշտամանց բարեկարգութեան մէջ. զի իմաստներն այն ազգեցութիւնը չեն ընդ մեր վերայ, եւ մանաւանդ եկեղեցական լեզուն թերի հասկացողաց, ինչ որ շատ անգամ կ'ընէ գեղեցիկ եղանակ մի եւ քաղցր ձայն մի որ կ'ընկերէ իմաստից։ Սակայն մէջ այսօր ստիպուած եմք խոստովանել, որ եթէ ուսեալ է անուսումն ժողովուրդը մեր ժամերգութեանց երկարութեան համար կը փախչին յեկեղեցւոյ, առայինքն ազոր գիտական կան եւ վերջինքն անգիտակից պատճառ մ'այլ ունին երգոց աղբատութիւնը թէ ժամերգութեանց եւ թէ պատարագի մէջ։

Այս նոր խնդիր չէ. ուրիշ անգամներ արդէն եղած են փորձեր հիմնովին կարգաւորելու մեր երգերը։ Միսթարեան միաբանութեան մէջ։ Մինաս վ. Բժշկեան ունի թողած 1815 թուականաւ մի անտիպ աշխատութիւն երաժշտական ձայնագրութեան վերայ, կատարած գործակցութեամբ հուշակաւոր տիրացու Համբարձման, յորում շարժած յազգայնական ոգւոյ, շանացներ է երրօպական երաժշտութեան արուեստը հայկական խաղիւք ներկայացնել, տալով անոնց եւրոպականաց զօրութիւնը։ Յետ երկար ամաց Նիկ. Ս. Թաշնեան տեղեկանալով նոյն արուեստին, համառօտեց զայն, եւ անուամբս՝ Դասագիրք եկեղ. ձայնագրութեան հայոց՝ տպագրեց ի Վաղարշապատ յամին 1874, որ այժմ ուրեք ուրեք կը գործածուին։ Սակայն ուրիշ բան չեղաւ այդու, եթէ ոչ մի եւրոպացւոյ հայկական տարազ գեցնել, յորմէ ոչ մի բան չէր կենար շահել հայն. եւ մեր երգեցողութիւնը մնաց հոն ուր էր։ Եղիա Մ. Տնտեսեան եւս յամին 1875 երաժարականց

մի Նիարագիր երգոց հայատա. եկեղեցոց, հաւաքածոյ իւր եւ այլոց պէտքէն յօգուածոց տպագրելոց յալլ եւ այլ օրագիրս՝ եկեղ. երգեցողութեան քանի մի կետից վերայ, յորում նախանշալուցութեամբ կը պատասխանուին միշտ հայկական ճարտգաւ եղանակները, թէ եւ անոնց հարազատութեան ընտրութեան մէջ կը տարաձայնին գրիչը։

Այդ նախանշալուցութիւնը, — որ սօվորարար ծնունդ է կանխակալ սովորութեանց կամ կարծեաց, — կը կաշկանդէ յոյժ շատերը, եւ քանի դժուարին է պայքարն, զոր կը հրաւիրէ Բազմավայի Սուրհանդակը միջոց անոր դէմ, առաջարկելով երեք նորագութիւն՝ « ա, Արդի եղանակները փոփոխելով, ք, Եւրոպական դաշնակաւորութիւնն ընդհանրացնելով ի մեզ. գ, Նուագարանաց գործածութեամբ », գէթ որ չարիք է հանգամանօք կ'ըմբռնեմ զայդ։ Սակայն որովհետեւ դժուարութիւնը բաւական պատճառ չէ յետ կասեցնել գոտոյք սիրող բարուն զայն քաղաքի եւ յառաջ միջոց, այլ մանաւանդ աւելի հարկեցուցիչ ի նոյն, կը քաշայնելովմ ձեռք ապա Սուրհանդակին։

Ա. Մեր եղանակաց փոփոխութիւն. աւարդի գարգացման երաժշտութեան, նոր ստեղծելով կամ ընդունելով յայլոց կրօնական ընտիր եղանակներ. Այս բանին բնականապէս հակառակ կ'ենին մեր ութ ձայններն, որովք կապուած մնացեր հիւք ի հնուց։ Յայտնաւորեաց մէջ ա. Սահակայ կ'ընծայուի անոնց եւ երկու ստեղծաց գիւտը, կամ լաւ եւս ի յունաց ի մեզ փոխադրութիւնը*։ Սակայն առնոց հնութիւնը չէ կարող արդարացնել այն տաղակալի միակերպութիւնը զոր յառաջ կը բերեն մեր երգոց մէջ։ Դուրս թող ձայնի բնական սկզբնականութիւնը, առ միայն քանի մի աստիճան, յիսուն անգամ, հարիւր՝ հազար՝ բլբ անգամ կրկնէ զայն նոյն կամ գրեթէ նոյն ոճով, կրկնէ ամէն տողի, ամէն տան, ամէն երգի մէջ՝ որ ընկ-

* Թէ ա. Սահակայ օրով եղաւ այդ, յայտնի է նոյն հայրապետի, ա. Մեքրապի եւ այլոց չարականներէն, որք զանազան ձայնից վերայ են չընուած. — Արարատ ամագրի մէջ (Իէ, 222, 226) ութ ձայնից ծագման մասին Սոգ. Ս. Սողոմոնեանի յառաջ բերած տեղեկութիւնք, զոր կ'առնուի նախնեաց առեղծուածային յիշատակարանէ մի, ինչպէս եւ Յայտնաւորեաց տեղեկութիւնն որ կայ նա եւ ի Շնորհ. եւ պարսկացի ինք (յէ՛ 88), ոչ ինչ չեն յայտնեն. ուստի այդ խնդիր զեւ կարօտ է լուրջ քննութեան. Բայց ձայնից ծագմանէն աւելի՝ հարկաւոր կը կարծեմք բարձրան խնդիրը։

նին նոյն ձայնի ներքոյ, ահա սովորաբար մեր եղանակներն ըստ ութ ձայնից*։ Այս է մեր երաժշտութեան այժմեան պայմանը։ Իսկ նախնեաց օրով եղանակները կը բաժանուէին երկու դասակարգի, շարականա-կան եւ մանրութեան**։ Շարականաց եղանակներն ըստ էութեան գրեթէ նոյն էին ինչ որ այժմ, ինչպէս կը գուշակուի անոնց համաձայնութենէն խազից հետ, եւ ազգի մէջ սովորաբար ամենուրեք նոյնութենէն. ուրեմն նոյնպէս միակերպ եւ ձանձրանալի էին։ Բայց մանրութեանց եղանակներն աւելի զարդարուն եւ ճոխ էին։ Սղոմոնեանի նախալիշտակ տեղից յառաջ բերած ցուցակի մէջ միայն կը հաշուին հարիւր վերջուտան եղա-նակներ՝ ութ ձայնից վերայ։ Սակայն եւ ազգո՞ք կորած են այժմ եւ անծանօթ մեզ. նոյն երգաց վերայ մեր ունեցած եղանակ-ներն ընդհանրապէս զոյգ չեն ընթանաւ խա-զից հետ։ Այս բանի փորձը կարող են տես-նել նոցա որ գրչագիր ունին. եւ որք չու-նին, ճաշակ մի կ'ընծայէ նոցա մեր վառաց նորատիպ ժամագիրն։ Ասոր պատեան յայտնի է. մեր խազերը անկատար եւ աւ-տիճանաւորութենէ՝ զուրկ լինելով, չկարո-զացան ոչ ճին եղանակները հասցնել մեզ, — բաց ի շարականներէն՝ որ իրենց պար-զութեան համար դիւրաւ կարգաւորուի գալ, — եւ ոչ ամէն տեղ եղանակաց հաւասարու-թիւն պահել։ Թուրք երաժշտութիւնն այլ մեծ ազդեցութիւն ըրած է գլխաւորապէս Բրջանչպատակ Հայոց եղանակաց վերայ, ինչ-պէս միշտ վկայած են եւ կը վկայեն տե-ղեակ անձինք, եւ մեզ իսկ կը տեսնեմք։

Աստի ի՞նչ կը հետեւի, եթէ ոչ՝ զի մանր-

ութեանց այժմեան եղանակներն իրաւունք չունին հաստատուն մնալու իրեն նախնեաց յորինած։ Հարկ չեմք տեսներ եւ ոչ շարա-կանաց եղանակաց վերայ սեռեղիւ։ այլ կա-րեաք է թէ առաջնորդ եւ թէ ասոնց գէթ տե-նականաց վերայ մի հիմնական փոփոխութիւն։ Այն ազգասիրաց, որք պարտաւոր կը համա-րին զմեզ նախնեաց ութ ձայնները եւ արդի

եղանակներն անփոփոխ պահելու, կը պա-տասխանենք՝ թէ երաժշտութիւնն ազգու-թիւն չունի, սրտի եւ մտաց արուեստ է։ « Երգովքս յախտակեալ, կ'ըսէ Լամբրոնա-ցին, զբաղեցուցանեն զմիտս նոցին (հաւա-տացեցել) յաստաւածայինս »։ եւ այլուր՝ թէ « Զից ինչ որ զկամս մեր յեղարկէ յուրախութիւն կամ ի տրտմութիւն՝ որպէս զերգոցն ձայն, յորժամ որպէս պարտն է՝ լինիցի » (Մեկն. պտր. տպ. Վեն. 284, 482)։ Ահա երաժշտութեան էութիւնը, սահ-մանը, Միանգամայն եւ քաղաքակրթութեան հետ կը զարգանայ կամ կը յետնի այն, ինչպէս տեսուած է ամէն ազգաց անցեալն եւ ներկայի մէջ իսկ, յորում աշխարհի եւ աշխարհի, գաւառի եւ գաւառի մէջ ըստ չափու լուսաւորութեան կը զանազանին եւ երգերն։ Եւ եթէ կը հաւատամք՝ թէ մեր քաղաքակրթութիւնն աւելի է քան զմեր նախնեացն, ուրեմն հարկ է՝ որ մեր երա-ժշտութիւնն այլ աւելի կատարեալ լինի։

Մեր նախնեք եւս միշտ հետեւած են զար-գացման. դար քան զդար յառաջադիմել է. (տես ի Շնորհ. և պրջ. իւր, է)։ Գրչա-գրաց մէջ յաճախ կը գտնեմք շինուած գա-նազան խազեր՝ ուրեմն եւ եղանակներ՝ մի եւ նոյն երգի համար. յետագայք փոխել եւ կատարելագործել են իրենց նախորդաց եղանակները։ ԺԻ և ԺԳ դարք գերազանցեցին քան զառաջինս։ Մեր մանրութեանց այժմեան եղանակներն, ինչպէս ըսինք, նոր շինուած են։ Շարականք իսկ, օրք ըստ էութեան նոյնպէս պահուած են, անցմէ եւս շա-տերն՝ որ յստալ ընթացիկ էին՝ վերջերս ի ստեղծ են փոխուած. ինչպէս երբեմն բուն ստեղծքն այլ յընթացիկ։ Տիրացու Համբար-ձումն եւ այլք եւս մեծ յեղափոխութիւն բե-րին եկեղեցական երգոց վերայ (Բգմ. Լկ, 52. — Արտ. ամս. Լ, 224)։ Այս ամէն փա-տերէն կը տեսնեմք՝ որ ոչ ճին նախնեք եւ ոչ մեր նախորդք կապուել մնացել են մի եղանակի հետ, այլ ժամանակի եւ ախորժա-կաց համեմատ փոփոխել են։ « Երբժամ որ-պէս պարտն է՝ լինիցի », ահա միակ եւս ու-յեղիլ օրէնքը՝ զոր կ'աւանդեն մեզ նախնեք եւ ողմտութիւնն, եւ ոչ թէ այս կամ այն եղանակը. եւ այդ « որպէս պարտն էն » իսկապէս պիտի զուգընթանալ միշտ ախոր-ժակաց զարգացման հետ։

Ստոյգ է՝ թէ շատերը գո՞չ են այժմեան երգոց վերայ, նկատելով զայնս եթէ ոչ իբր նախնեաց յորինած, բայց նոյն իսկ իրենք իրենց մէջ. եւ ամա՞ք եթէ կարելի է ըսել՝ կը զմայլին եւս։ Սակայն այստի չի հետեւիր թէ ուրեմն ըստիք եւ քաղաքակրթութեան

* Հին յայնք հրէից եւ այլ արեւելեայցո միակերպ եղանակները « շառաշխէն » (փասփոս) կ'առնանէին։

** Մանրութեանց կը կոչուի դեռ անախ պի գիրք նախնեաց, որ իւր մէջ կը բովանդա-կէ ժամերգութեան եւ պատարագի երգերն ի մի խմբուած՝ բաց ի շարականաց։ Այս ժառանգի յիշատակութիւնը գտած եմ մինչեւ ԺԳ դա-րուն, Շնորհաւոյ առ քահանայս Թղթոյն մէջ (տպ. Վեն. յէջ 486)։

Համաձայն են անոնք. — միշտ այս հայուէն դուրս պէտք է Հանել քանի մի լաւ եղանակները: — Կորդուացիք, աղուանք եւ այլ նման ազգերն այլ նոյնպէս գոչ են իրենց եղանակաց վերայ, եւ սակայն մեք Հայերս իսկ զի կրիթ եմք քան զնոսա, չեմք կարող լսել զանոնք: Ե՛կ այդ կիսավայրենաց մին Հեռացնեմք իւր Հայրենիքէն, քաղաքակրթեմք եւ դարձնեմք իւր մայրենի գաւառը, եւ պիտի տեսնեմք՝ որ ամենքնորդ պիտի փակէ այն եղանակաց դէմ՝ որք յառաջ արտօսը կը կաթեցնէին իւր աչերէն: Եւ իսկն՝ ուր անձանթ է լաւագոյնը: Մեր երգերն այդ երեք կարգէն մեծ էր պատմական. կամ մեր պէտք է փնդուել զայդ սահմանող դատաւարը: Յայտնի է թէ Հո՛ն՝ ուր մեր Հասարակաց ուղղագիտ միտքը կը վկայէ՝ թէ երաժշտութիւնը կատարեալ է քան այլորդայն է յԵւրոպէ: Եւ ահա չեմք տեսներ մի եւրոպացի բանիրուն մարդ, որ չվկայէ՝ թէ մեր ազգային երաժշտութիւնը մեծ թերութիւն մ'է Հայկական փանծաղաղ արարողութեան վերայ: Այս բանիս Հաստատութիւնն իրենք, անոր Համառոտներն այլ, եթէ ուզեն՝ կրնան նկատել Հետեւեալ տեսութեան մէջ: Մեր եղանակներն ընդհանրապէս Հային Հետ կապուած են. եթէ քաղցը Հայն մի երանակէ զանոնք, կրնան լուռիլ. իսկ եթէ չկայ այդ Հայն, ամենուրեք անտեսելի կը դառնան. ապա յայտնի է՝ թէ Հնչյալ լուռելու ժամանակ ոչ թէ երգին է շնորհ, այլ Հայնին: Երգերն ունին միայն մի կմախք, որ յանձնուած է երգչին՝ ըստ իւր քմաց եւ ճարտարութեան կամ անճարտարութեան զգեցընել անոր մարմին գեղեցիկ կամ տգեղ: Եւ րոպացւոցն այդպէս չէ. նոքա երգին գեղեցկութիւնը կապած են անոր կազմութեան Հետ ի ձեռն Հայնարութեան. թէ քաղցը եւ թէ ոչ քաղցը Հայնը պարտաւոր են զայն նոյնպէս երգել՝ մի եւ նոյն խաղերով եւ աստիճանաբարութեամբ. որով նոցա եղանակաց մէջ կը պահուին միշտ նոյն ելեւէջութիւնը, փոփոխութիւնը, անուշութիւնը: Այլ է՝ թէ ասոր Հետ ընտիր Հայն մ'այլ միշտ աւելի փայլ մի կու տայ երգին՝ առանց բնաւ փոփոխելու զայն: Բաց աստի կը վայելեն նոքա նա եւ բանաւոր ազատութիւն մի՝ նոյն պաշտամանց վերայ նորանոր եղանակներ յորինելու եւ փոփոխակի երգելու զանոնք, նրկասերով՝ որ եղանակ մի որչափ եւ ընտիր լինի, սակայն յարատեւ կրկնութեամբ ստորական եւ անազգուն կը դառնայ: Ահա այս Հարկաւոր է մեզ, երգի եւրոպական շնորհք եւ գեղ, — զի մեր երգոց Համար

խնդրեալ Հային եւ ձիրք ամէն տեղ չեն գտնուիր, — եւ ազատութիւն նորանոր եւ զանազան յօրինման:

Եւրոպական քաղաքակրթութեան Հետ եւ րոպական երաժշտութեան ճաշակն առողաց Համար մեր եղանակներն ըստ մեծի մասին այլ եւս չեն « որպէս պարտն է ». ապա աւելորդ է խոսել պահել զանոնք: Միտք եւ միտք երգի Համար չեղան, այլ երգն ասոնց Համար. ուրեմն նա պարտի ասոնց յարմարիլ, որով միայն պիտի կարենայ Հասնել իւր միակ վախճանին, « յափտակել զմիտս »: Իմաստասիրութիւնը ի՞նչուցանէ՝ թէ միշտ նորդը միշտ Համաձայն պիտի լինի վախճանին. եւ այն օրէն յորում անյարմար կը դառնայ, կը դադարի միջնորդութենէ. պէտք է յայտնաբերի ի բաց յեղուլ կամ բարոքել զայն: Սխալ ազգասիրութիւն է վախճանը միջնորդին զոչելը: Արդէն մեր ազգային երգերէն մեծ մասն յեւրոպացւոց են առուած, — թէ եւ չառք յետոյ Հայնագրութեան պակասութիւնէն ծամածռուած. — եւ ինչո՞ւ լոկ գեկեղեցին զրկեմք նոցա սրբազան եղանակներէն օգտուելէ, Հռչակաւոր երաժշտաց Հոգեշունչ եւ Հոգեզմայլ նուագներէ: Մանաւանդ նախ քան զայդ — խօսելով մի շնորհս վրէժնորդաց ազգային եղանակաց — զատելով առեղծ մեր զանազան գաւառներէն այն եղանակներն՝ որք աւելի ընտիր են քան զոր ունիմք. բան մի որդյ դէմ եւս — պարմանային է — պակաս չեն Հակառակորդ պահանջողականներ, որք իրենց ունեցածք քան զայլն ամենայն գերազանց եւ ախորժելի կը գտնեն:

Բ. Դայնականադարձիւն: — Այսու կ'իմանամք Համալսի գուգընթացութիւն Հայնից ի զանազան աստիճանն: Չկայ բան մի որ այնչափ քաղցրացնէ զերգը, ինչպէս սա, որ սակայն ընդհանրապէս կը պակասի ի մեզ, մինչ արեւմտեան եկեղեցին կը պայծառանայ այնու: Արդարեւ ազգին քանի մի զլիաւոր տեղեղաց մէջ արդէն սկսած է ասոր փորձն ի պատարագի. այս նպատակաւ Հրատարակած էմք եւ մեք եւրոպական Հայնագրութեամբ « Երգք պատարագի հայ եկեղեցւոյ » Հանդերձ քանի մի չարականոնք: — Միայն թէ ազգային կոչեցեալ եղանակաց պահպանութեան նախանձաւորութեամբ՝ քանի մի երգը որ ի բնէ միակերպ եւ ձանձրանալի էին, նայն վիճակի մեջ են մնացեր նա եւ ի դաշնակաւորութեան: — Սակայն սա նկատեալ յընդհանուրս՝ արեւելայցոյ շատից Համար դեռ բարեկեցական խառնակութիւն մի կը թուի, անտեսելի չփոթութիւն Հայնից: Բայց եթէ ստուգել կրթուած լինել մեր ճա-

շակը, պիտի տեսնէինք՝ որ նոյն իսկ բնութեան մէջ կայ այն, եւ անոր գերազգոյն զարգըն է։ Այլ դաշտի վերայ հարկեր տեսակ ծաղկունք միանգամայն կը ներկայանան մեր աչաց։ մի երկնի վերայ պէսպէս պայծառութեամբ աստեղք միանգամայն կը փայլեն։ զանազանութիւն ի բոլոր, զանազանութիւն թռչնոց, անոնց երգոց եւ գունոց մէջ, զանազանութիւն ամենայն տարերաց մէջ, ահա բնութեան հրաշալիքը։ Եթէ այդ ամէն աւարածք ոչ ի միասին՝ այլ հետ զհետէ երեսէին մեզ, որչափ ցուրտ պիտի լինէր տիեզերքս։

Բնութիւնն ոչ միայն կ'ուսուցանէ մեզ դաշնակաւորութիւն յերգս, այլ եւ կը ստիպէ կը բռնագատէ՝ այլ աստիճան ձայնի տալով տղայոց եւ այլ շափաշակոց։ ոմանց թաւ կամ բամբ, ոմանց վառ, ոմանց զիւ եւ այլոց այլ, որպէս զի իւրաքանչիւրը զատ ձայն հանէ։ Արդ բնութեան օրինաց յայտնի բռնաբարութիւն չէ՞ այդ զանազան առտիճանաց միարանութիւնն ի մի աստիճան։ Այսու բնականապէս ձայները չյարմարելով միմեանց հետ, շատեր երգի պահուն կը ստիպուին լռել կամ ճշել, մեղուի պէս բզկել կամ անհեթեթ կերպիւ զուշել։ որով ի յոգնին եւ կը խանգարին փողք, արագ կ'եղծանին ձայնք, եւ յառավ կու գան պէսպէս հիւսնադնութիւն։ Ոչ մի ազգի արարողութիւն — եթէ երգի միաձայնութիւնը կարելի լիւնէր արարողութիւն համարել — կարէ արդարանալ բնութեան արարչադիր սահմանաց այդպիսի չկալաւով ընթացից մէջ։

Թէ միաձայնութենէ յառավ եկած երգն իսկ որքան խառնակ եւ խժալուր է, ո՞վ չըզդիտէ։ Սովորաբար հարկ է՝ որ ամէն տեսակ ձայներ ի միասին խառնուին դասի մէջ։ բայց որովհետեւ մեր խաղերը շափէ եւ աստիճանէ զուրկ լինելով երբն երգեցողաց զմաց մասնուած է, ինչպէս ըսինք յառաջ, ուստի ոմն որ ձայնեղ է՝ կը թրթթէ իւր հագագը եւ սանձարձակ գեղգեղմամբ կ'ընթանայ։ ոմն քաղաքային, ցուրտ եւ անհամ կերպիւ կ'եղանակէ։ միոյն ձայնն արագ է, յառավ կը մղէ երգը։ միւսին զանդաղ, յետ կը քարէ։ եւ այսպէս երգիչը թէ զիրար եւ թէ երգը կը խանգարեն։ Եթէ ամբողջ խումբն ըստիւր ձայներէ իսկ կազմեն, որ շատ դժուարին եւ եւ ամէն տեղուց համար անհնարին, սակայն ձայնի աստիճանաց զանազանութիւնը ցորչափ կայ, չէ կարող ոք իրենէ համար անբնական աստիճանի մի վերայ այն դիւրութեամբ, ճշգրտութեամբ եւ քաղցրութեամբ երգել, ինչ որ կ'երգէ ընկերն՝ որում նոյն աստիճանը բնական է։ իսկ քանի տեղ

կարելի է գտնել համաստիճան ձայնից խումբ մի։ Եւրոպացիք այլ ամէն տեսակ ձայն կը խառնեն երգի մէջ։ բայց այս զանազանութեամբ, որ նախ՝ նոքա անոնց իւրաքանչիւրը իւր բնական աստիճանի մէջ կը պահեն։ եւ երկրորդ՝ անոնց համաչափ զուգընթացութիւնը կը ձուլէ կը քաղցրացնէ բոլոր ձայները։

Ապա դարմանալի չէ, որ մեր քաղաքակիրթ որեւոր վարժած եւրոպականին գեղեցկութեան, չի կրնար յեկեղեցի դալ եւ օրով ականջ դնել մեր անկանոն տաղտկալի եղանակաց։ Այս պատճառաւ թատերք եւ դաշկիճք աւելի հրապուրիչ են դարձած այսօր քան Մատուռն տաճարը։ Ստորեւ յնդդումք Բարձրելոյն տունը քան զաշխարհի յարկերը։ Հինն իսրայէլ երաժշտութեան բոլոր ճոխութիւնը տաճարի մէջ կը բերէր կը թմբէրէ։ անոր կը հետեւին արեւմտեան քրիստոնեայք։ մեզ հայքս միայն անոցմէ զարտուղի պիտի ընթանամք։ Եւրաժշտութիւնն իւր ամբողջութեան մէջ երկրային է, սուրբ է՝ երբ կ'օծուի կրօնական գեղով եւ սրբավայրին արժանաւոր մեծ վայելչութեամբ։ եւ ի՞նչ բան կ'արգելու մեզ ընդունել կամ մանաւանդ արգէն ընդունուած զարգացնելով ծաւալել յաղգիս, երբ բնութիւնն եւ քաղաքակրթութիւն կը պահանջեն զայն մեզմէ։

Գ. Նառաքարանք։ — Առտեք թէ մի լինին եւ թէ մանաւանդ աւելի, կարեւոր են իբրեւ առաջնորդ դաշնակաւոր երգեցողաց խմբին, օգտակար իբրեւ օգնական, եւ յոյժ գեղեցիկ իբրեւ երգական։ Այս երրորդ տեսութեանը արարեւ քանի՜ վայելուչ եւ վսեմ բան է, որ բանաւոր մարդը միացուած իւր ձայնն անշունչ տարերաց հետ, օրհնութիւն մասնուցանէ հասարակաց արարչին։ Առաւուած ինքնին մարգարէից եւ եւս առաւել Գուրթի բերանով յաճախ կ'իմացնէ՝ թէ Խորոժելի է իրեն այդ. « Տասնադէտս սաղմոսարանաւ սաղմոս առացէ նմա » (Սղմ. ԼԲ, եւ այլն)։ Այս բանիս գիտակցութիւնը մարդկային բնութեան մէջ իսկ կայ։ որոյ համար ի օկըրբանէ հետեւ քաղաքակրթութեան եւ վայրենի, աստուածապաշտ եւ հեթանոս ազգեր սրբազան պաշտամանց մէջ ընդունած են զնուազարանս՝ զաստուածս հանելու համար։ եւ բաց աստի՜ նա եւ Ժողովրդեան սիրուն աւելի եւս յուզելու։ զի ասոնք իրենց քաղցրաձայնութեամբ այնպիսի մեծ ազդեցութիւն ունին թէ մարդկութեան եւ թէ նոյն իսկ անմահոց վերայ, որ ամէն բնական ձայն չի հասնիր անոնց։ անոնք մեր միտքը եւ զգայութիւնը աւելի կը յափտակեն։ Բարեխաւոց արքային Նարուզդոնոստոյայ կանգնած

արձանին գիւցական պաշտօն մատուցաւ « ի ձայն փողոյ, արնգի, թմրկի եւ քնարի եւ տաւրի, նուագարանաց եւ ամենայն ազգաց արուեստականաց » (Դան. Գ.) : Աթենացիք գեղիեան տօնից մէջ « պէսպէս գործիս նուագարանաց հարկանէին » (Ուղեւ. Անաբար. Բ., 328) : Երուսաղեմի տաճարին մէջ աւելի քան երեսուն եւ յորս տեսակ նուագարանք կը հաշուէին (Հ. Զմէ. ի Մեկն. ազ. Ա., 142) : եւ այլն :

Բարձրերոյն նուիրուած գործիները սիրելի էին եւ նախկին քրիստոնէից, առ որս ի գործածութեան էին փոցն, քնարն եւ սաղմոսաբան՝ ըստ վկայելոյ Կղեմայ աղեքսանդացւոյ (Բ-Պ դարուն) ի Յորգորակին առ հեթանոս : Սա նոյն տեղը կը խրատէ ըզգրիտոնոնայս գգուելանայ հեթանոսական սրինգներէ. որ նշան է՝ թէ սկսեց էին զանոնք այլ գործածել : Թուի թէ այս զեղծման պատճառաւ քարանձ յետոյ նուագարանք : Բայց առ այն սէրը չպակասեցաւ երբեք : անտանին Մերերիանոս եմեստիս (Ոսկբ. Ժամանակակից) կ'ըսէ. « Ձէր ինչ շար սառկոն՝ թէ զաստուածեղէն օրհնութիւնն երգէր իբրեւ զսաղկիւնն. չէր բամբասանաց քնարն թէք քնարաւն Աստուծոյ երգս ոգ մատուցանէր » (Ճառ Ե) : Սոյն զգացումն այլ հնոց քով եւս կայ :

Գալով գործածութեան նուագարանաց ի մեր ազգիս, Դ դարուն հեթանոսական սովորութեանց հակամէտ Պապ Թագաւորէն վերահաստատուած կը յիշուին փող, փանդիս եւ վին՝ ի յուզարկաւորութեան մեռելոց, (Բուզ. Ե, Ա), յորմէ կ'իմանամք՝ թէ աղոնը յառաջ ի գործածութեան էին մեր հեթանոս նախնեաց կրօնական պաշտամանց մէջ. նոյնպէս եւ բամբիւն յաշխարհիկ նուագա (Խոր. Ա, ԻԴ, Ա), եւ այլն : Երբ քրիստոնէութիւնը մտաւ ի Հայաստան, ուրիշ եկեղեցեաց մէջ արդէն դադարած էին երաժշտական գործիք. սուտի կը կարծուի՝ թէ եւ ի մեզ գործածելի չեղան : ԹՀ. Ի. մասատաիրի քով (Ը դարու) նշանաւոր խօսք մի կայ եկեղ. երգեցողութեան մասին. « Պարտ է ուսումնասիրացն եւ խոնկանաբուսից նուագարանօք քնարահարու լինել երաժշտական հոգւոյն. այլ եւ զբոլոր զոյացելոցս ընդ ինքեան հնչեցուցանել ձայնից տեսակս » (ի գործս Իւր, յէջ 20) : Այս կրնայ թէ այլաբանական եւ թէ իրական մտօք աւնտիլ. առ այժմ չունիմ այլ վկայութիւն զիրական հաստատելու :

Հաւատարմաւ գիտեմ միայն քլոցի գործածութիւնը քաւական ի հնուց, առուած ի յունաց. իմաստասիրի ընծայուած յեկեղեցի

երկրորդ ճառին* մէջ կայ « քլոցացն հարուն » (144), նոյնպէս եւ յՈղբ Եղեւսիոյ ի Շնորհաւույն (ԺԲ դարու), նորին Ժամատեղաց խրատուց մէջ եւ այլ բազում ուրեք : Քլոցը վաղուց բոժոժաւոր էր առ մեզ (որպէս կը տեսնեմք այժմ եւ առ Սորա), որով « հարկանէին » զայն, այն է հնչեցնել, ինչպէս եւ յՈղբ Եղեւսիոյ կը կարգամք « զհնչող քլոցանին » : Այժմ ի գործածութեան է եւ ծննդայն՝ որոյ յիշատակը չեմ գտած հնոց քով. Գր. նարեկացի (Ժ դարու) Աշարանից խաչի պատմութեան մէջ կը յիշատակէ կենաց փայտին մատուցուած պաշտօնն « ի ծննդայն մարմնեղէն » (ԻԲ), այլ ոչ պղնձի : Ուրեք ուրեք կը գործածուի ուրիշ գործի մ'այլ՝ կապուած փոքր զանկաններէ, որք մի երկաթի արագ շփմամբ կը հնչեն :

Այդ բոլորն ի՞նչ են, եթէ ոչ անկատար նուագարանք. զի նուագարանի էութիւնն ոչ թէ այս կամ այն ձեւի, այլ արուեստական ձայն հանելու մէջ կը կայանայ. եւ մեր քլոցոն հին գարեբէ, եւ այլք որ տնդուշտ նոր են, կը հաւաստեն՝ թէ մեր եկեղեցւոյն համար խոր թէ արուեստական գործեաց առ վրոսթիւնը. եւ եթէ անկատարն ընդհանուած են, եւս առաւել կատարեալքը կըրնան այժմ ընդունուիլ : Մեր հարգ կատարեալքն իրենց ժամանակ ընդհանրական եւ կեղեցիկն զուրս տեսնելով, թէպէտ չհամար ձակեցան գործածել զայն՝ ինչպէս կը կարծուի, բայց եւ իրենք միշտ յարգեցին, եւ երբեք չմոռացան անոնց յիշատակը : Մեծն Մեսրոպ զարած է իւր շարականաց մէջ, եւ մեք ցայսօր կ'երգեմք, « Հնչմամբ փողոյ, սաղմոսարանաւ եւ քնարիւ օրհնեցեք զՏէրն ի յերկին » (ԲՁ որ. պահոց) : Փոքր մի յառաջ տեսաք իմաստասիրի խօսքն այլ, « նուագարանօք քնարահարու լինել » : Նա եւ Նարեկացին սովոր է այլաբանօրէն գործածել միշտ անոնց անուանքը. զոր օրինակ՝

* Այդ ճառն ի զըջգիրս անանուն, բայց ի հրատարակեաց իրաւամբ ընծայուած է Աւանցեցուցն. ըստ որում բաց ի յար եւ նման դարձուածոց եւ շարադրութիւնէն ընդ այլ գործոց նորին՝ որպէս կը խորհրդածեն տպագրիչք, զըմէն կը զնեմ հոս. ճառին այս խօսքը « Համբարձմամբ աւետարանին... յորոյ վերայ զստատածորէն տեսանեմք հոգւոյ ակամբ յաթոռ նստակ շարձու » (142), կայ նա եւ ի մեկնութեան. « Համբարձումն սրբոյ աւետարանին, յորոյ վերայ դասուածորէն հոգւոյ ակամբ տեսանեմք նստակ, իբրեւ ի վերայ աթոռոյ շարձու եւ վերացելոյ » (103) :

Խաչի ճառին, Աստուածածնի ներբողին, եւ աղօթից մէջ։ Նոյնպէս եւ այլ նախնիք մեր, ինքն ինքեալ հակառակ լինէին զործեաց, յայտնի է՝ թէ չպիտի այդչափ փարէին անոնց։

Արդ՝ այժմ մեք, որ կը տեսնեմք կատարեալ զործեաց ընդունելութիւնն այլ եկեղեցեաց մէջ, — որք նոյնպէս չունենին յառաջ, բայց իրենց արարողութեան դէմ չհամարեցան ընդունելը*, — ինչո՞ւ չիրականացնեմք մեր հարց փափաքը, հետեւելով օրինակին բոլոր մարդկութեան, հին ընտրեալ ազգին, նախկին եւ արդի քրիստոնէից, եւ հպատակելով քաղաքակրթութեան պահանջին։ Եթէ չլինէր այլ օրինաւոր պատճառ, դէ՞ք ասոր համար պատշաճ էր ընդունել զնուազարանս՝ զի հասնելի են մեր Աստուծոյն, ինչպէս քսիւնք յառաջ։ Պատմոսի արծիւը մինչեւ անգամ երկնից մէջ Գառնի շուրջը տեսաւ անոնց զործածութիւնը (Յայտ. Ե. 8)։ Ի՞նչ, մի թէ մեր ազգային արարողութիւնը կը պահանջէ՝ որ արեւելեան անշքացած եկեղեցեաց օրինակը նախամեծար ընտրելով, ոչինչ համարիմք Աստուծոյ յօժարութիւնը եւ երկնայնոց օրինակը, եւ յաւել տա՛նք պահեմք մեր դռները լուսաւորութեան դէմ։

Յ. ԵՐԲ Ո՛ւ, ի՞նչ, Ե. Ե. ԵՐԲ Դ՛Ա.

(Աս խմբագրապետ « Բազմալեզու Հանդիսաբանի » նամակ անկեղծ քարեկամի Ալլիլիի տնօրէնականի երրորդ հարցի առիթով)։

Ուշագրութեամբ կարդալով Բազմալեզու ապրիլ ամսի սուրհանդակի երրորդ հարցումը, եւ այդ հարցման առիթով մայիսի եւ յունիսի համարներում ցրած պատասխանները « Եւալուր » եւ « Բանասէր » ստորագրութիւններով, նաեւ խմբագրութեան այն քանի մի գիտողութիւնները՝ Հանդէսի ներքեւ նշանակած թուահամարներով, որ բոլորովին հակառակն են ցոյց տալիս առաջինի արտայայտած կարծիքների դէմ, հարկաւոր եմ համարում գրել այս երկտողը, յայտնելով, որ երեք կողմի

կարծիքներին էլ համաժող չեմ, աւելի սաւայն հակառակ կարող եմ տեսնել ինչ դէպքի յիշեալ երկու անձանց տեսութիւնները, քան խմբագրութեան միայն չորրորդ թուահամարում յիշածը։ Պարզաբանեմք մեր միտքը։ Գերաբար խմբագիրը ասում է. « Ձեզը գործածուի բայերու ստորագրական եղանակին հետ, կամ պայմանական ու պատճառական նախադասութեանց մէջ »։ Ապա մէջ է բերում օրինակ՝ որպէս համոզելու միջոց՝ իբր թէ ուղիւ, — եթէ չի տեսնէք կամ չի զղլար, որպէս զի չի լան կամ չի յաղթունի » եւ այն։ Ըստ իս, բոլորովին հակառակ է մեր տեսութեան այդ տեսակ սխառմը ուղղագրութեան։ Մինչ դեռ այդ է նման օրինակները պէտք է կոչուին եւ ուղղագրութիւն, Բազմալեզու խմբագիրը եւ ան հասարակ տանկաւայ գրողներից չաւտե՛րը՝ այդ տեսակ օրինակներ գործածելովը ընդհակառակն կարող են աւելի խրթնացնել եւ բարդութիւններ ու դժուարամարտութիւններ ներկայացնել ընթերցող հասարակութեան առաջ։ Ո՛ւր մնաց թէ այդ սխառմի ուղղագրութեամբ զանազան դասագրքեր կազմուին մանուկ սերնդի տարական կրթութեան համար, որի ուղեղը եւ հասկացողութիւնը կանոնաւոր աստիճանական կերպով պիտի զարգացում ստանան — ամենահեղեց ակամ ձգտելով հետզհետէ դէպի բարձր — մանկան սրտի պէս մաքրոր, պարզ եւ խառն գրգռածներով, Եթէ իրեք ցանկալի է, որ մանուկ սերունդը եւ թէ առհասարակ ընթերցող հասարակութիւնը բարեկրթութիւն կանոնաւորապէս պէտք է նախ վերացնել « բռնաբար » բռնորի առնելի խառնաշփոթ ներմուծումը եւ տալ ուղղագրութեանը ճշմարիտ եւ լեզուաբանական անհերքելի ոտղորդութիւն։ Այդ նպատակին հասնելու համար, ըստ իս, բառերը ուղղագրութեան մէջ պէտք է հարազատորեն, առանց կողմնակի օտարահնչիւն խրթնարանութիւնների, կոկիւլ, յղկիւլ, մաքրել, դեղեցկացնել, եւ որ զիսաւորն է, համաձայնե-

* Հռովմէական եկեղեցւոյ բարձրագոյն իշխանութեան փափաքանաց համեմատ թէպէտ վերջերս նոյն եկեղեցիէն զուրս ձգուեցան նուազարանք, բայց քանի մին՝ երեւոյնը պահուած մնաց, եւ անկարելի չէ որ մասնաւորապէս այլքն եւս ընդունուին դարձեալ, քանի որ եւրոպական ժողովուրդն յայնս կը ձկտի միշտ։

1. Ձեզը գործածուի, մեր կարծիքով, հետեւեալ օրինակներէ մէջ. Բառեկց խորամանկ չի գտնուիլ։ Բռնաւորից ազատութիւն չի ստացուիլ, նրա որոտում բարձրագոյն չի զարթնիլ, Ի դէպ, Մշակի պատասխանների բաժնում յաման կարգում ենք իր թղթակիցներին ուղղւած. « Ձեր յօդուածը կամ պատկերը չի աւելագործ »։ Այստեղ չ նկատել չե՞ք գործածում, եւ զաւելուանակ, մտնել է մեր տեսութեան հայեցողութեան։ Արդեօք ի՞նչ կարծիք կ'ունենան Բազմալեզու խմբագիրը եւ նրա բանասեր պաշտօնակիցները այս մասին։

հակիրճեցնել և դուրսնելու դարձնել, այնպէս որ բառերը իրանց իսկական զօրութիւնը և նշանակութիւնը չը կորցրած՝ և դիրին՝ նուրբ, սաւուռ լինին առողջանութեան համար և լաւ, ախորժիկ ակունքին հնչելու։ Օրինակ «վերայ» գործ են ամուսնումներ։ Հարցումները, ինչ կարիք կայ կարճ ձանապարհի թողնել և երկարիմ վազել։ Միթէ յանցանք է և բարոյք գործած չե՞նք լինի, եթէ այդ բառի միջից հեռացնենք և և յ տառերը և գրեք ուղղակի վրա։ Կարծեմ թէ բառի նշանակութիւնը տեղի է. եւ աւելորդ է, նոյնպէս և յ կարծեա վերջինը պատռաւք է կազմում աստուին, առանց կարծեա նրա՝ «եօլա» չի երթայ, անշուշտ վայր պիտի գլորուի . . . վրա, համարեա և այլ մի քանի բառերի գործածութեան նկատմամբ գովելի է մեր իւրաքանչիւրի միակ առավարկմանակ, ազատու միտ Մշակ լրագրի ուղղագրութիւնը. իսկ այդ ապագայ հասարակական կազմակերպութեան յայտարար և կուրտուրայի զարգացման խթան լրագրի հետ մենք մասնավոր համաձայն չենք վի գործածութեան խնդրում։ Օրինակ ազատված, խորտակված, ալված . . . հետեւաբար ու տառի փոխարին գործածելով վի, պիտի գրուի ըստ Մշակ և այսպէս Աստված, նվէր, թվական. որ բոլորովին օտարուի կը թուայ։ Միայն «գտնուում» է, «ազատվում» է, «խորտակվում» է և այլն, այս տեսակ բառերի մէջ վի գործածութիւնը ընդունում ենք. պատճառը թողնում ենք ապագային։ Մեր ժողովրդական բանաստեղծ է մանկական գրող Պ. Ղա. զարդա Աղայանից գործ է ածում և, որի ամբիւ մի ժամանակ մեծ խռովութիւններ և տարաձայնութիւններ ծագեցին ուսանչայ գրականութեան մէջ՝ հայագէտներ շրջանում, ինչպէս Ռուսաց գրականութեան մէջ երբեմն ծագած և և տառերի վերածնելու միտքը, որ բառերի վերջը գրվում են, բայց չեն հնչվում. չի ուղղութիւնն պաշտպանում են այսօր Մարգը, Տարա շարժաթերթը և Ալեքս. մանկական հանդէսը։ Դրա ամենամեծ հակաակորդը հղաւ Մշակ հանգուցեալ հիմա գիրք՝ հրապարակախօս Գրիգոր Արծուին, անուանելով չինական ուղղագրութեան . . . թէ այսպէս և թէ այնպէս, թող ներուի ինձ, թէ հրապարակաւ քայքայեալպէս համակրութիւն յայնմ չի գործածութեան, միայն չափաւոր, Աղայանիցի պէս այնքան էլ չիւնանողաբեան ժայռայեղ տեմելով չվարա կառած։ Օրինակ, ինչո՞ւ չը գործածել նէր, ազատված, թվական և այլն. այստեղ նկատելի է, որ ու տառը օչնաւում կորուում է և հարկ է որ այդպէս լինի. դա աւելորդ բեռն է, առանց դրան էլ բառը դիրին,

սահուն է հնչվում և հակիրճ է. տեսնում էք, որ բառը իր իսկական նշանակութիւնը չէ կորցնում, ուրեմն էլ ինչ . . .

Պարսկաստանում դասաւանդութեան ժաւանակ աշակերտներից մէկը կարգում է Նու-էր։ — Միտա են հնչում, տաւ Նու-էր, — նկատում եմ ես։ — Ո՛չ, վարժապետ, էստեղ գրուած է Նու-էր, ախր ու տառը դուք աւանդում կուլ էք տալիս։ — Սիրելիս, բացաւորում եմ ես, — երկարաբար ու թէ և գրվում է, պիտի հնչուի դրա տեղ ք՝ առանց ու արտաւանութեան — Նէր։ Աշակերտի մէջ իսկոյն կասկած է ծագում, թէ ու աւելորդ ինչո՞ւ է գրվում, ու գրուած է, ի՞նչու պիտի առանց ուի ու կարգադրուի Հաւանական է, մանուկների կամ կրթւող սերնդի մտքի ուսակած փարատելու և աւելի հնչուութեամբ ուսուցման ընդգնացնելու ուղղութեամբ։ Համար ուղղակի գործածուի ու քերական դուրս գան նկատողներ և ասեն ինձ, թէ ինչո՞ւ հակուած Աղայանիցի ուղղագրութեան՝ Բաշմաթուում «ստիպուի» լոյս տեսնող իմ «Հանապարհորդական յիշողութիւններ Պարսկաստանում» վերնագրով յօդուածում գործ ենք ածել ու։ Մինչ կը պատասխանենք այդպիսիներին, թէ որովհետեւ մեծամասնութիւնը գործ է ածում չի և վի փոխարին ու մշտական հին ուղղագրութեան համաձայն (Բաշմաթու, Նու-Գու, Աշմաթու, և այլն) և որովհետեւ մեր արդի ուղղագրութիւնը չէ մշակուած, չէ կատարելագործուած և իր «աւելորդութիւն» լուծումը՝ դրականապէս դեռ չէ ստացած, ուստի հարկ ենք համարել միջին ձանապարհը բանի՝ գործածել ու չեղոքապէս . . . Մինչ երբ, ստացեք խնդրեմ, խաբարափի այսպէս մեր արդի հայկական ուղղագրութիւնը ծանր երկուցի մէջ, տաւորութիւն քամիներին խաղալիք, թեր և դէմ կարծիքների աղաւաղման առարկայ, գանաւան գրողների «կամայաւոր» քմահաճոյքներին երթարկում՝ անուծելի։ Վերջապէս ժամանակ է մտածել այնչափ տարիներից ի վեր յուզում ապ ինդիրը պարզելու։ Յանկալի էր, որ կազմուէր երկու կողմից էլ ուսանչայ և աւանկայ լեզուագէտներից և հայկաբաններից մի ֆիլոլոգիական մեծաւ ժողով, բառիս բուն նշանակութեամբ, որ վեճաստեղ և մի որդ գործածական, ընդհանուրին մտալելի սխառուի տակ դնելու հնարաւորութիւն լինէր ուղղագրութեան բոլոր խնդիրները և կանոնները։ Վերջապէս, այդ մեծաւ ժողովում Յիւնեան գրագէտներ կարողանային միացնել, ձուլել առաջապէսական և տանկաշայտ արեւմտեան և արեւելեան

բարբառները¹ և ընդունէին աշխարհիկ լեզուի (աշխարհաբարի) և գրաբարի՝ մէկի կամ միւսի ներկայիս մէջ անհրաժեշտութիւնը՝ համաձայն արդի ժամանակակից գրականութեան պայմաններին։ Այժմ յաջողութիւն ապրի մասին կասկածում ենք, այն ժամանակ մեր գրականութիւնը գեղեցիկ, ցերեպանկաւոր համալսարաններում մէջ առաջ երթալով կը ծաղկէ, կը բարգաւաճի, առանց կանգ առնելու ժամանակաշրջանի դժուարութիւններին հանդիպելով անարդիւնութեան շարժում։ Մենք վերադառնալ յենցինք, որ համաժողով չենք մտնաւորութեայ խմբագրութեան կարծիքին։ — «Չի տեսնուի, չի գիշար, չի լաւ կամ չի յաղթութիւն» առաջադրած բառերի դէմ մենք իսկականը կը դնենք այստեղ չտեսնէք, չգիշար, չլաւ, չյաղթութիւն, համաձայն Եւրոպայի և Ռուսիայի պատասխաններին ծանօթութեան կամ տեսութեան։ Սակայն հարց. ի՞նչպէս գործածել չը և չ։ Մեր կարծիքով բաղաձայն տառերով սկսող բառերի առջև հարկաւոր է չը, որինք, չը ստացաւ, չը գտնուեց, չը գիշար, չը տեսաւ... իսկ ձայնաւորների առաջ չ, օրինակ՝ չազատել, չտեսել, չամաչել, և այլն։ Թէև այս տեսակ գործածութիւնը ուղիղ կը լինի, բայց աւելի լաւ է, թէ բոլոր բառերի առաջ առանց խտրութեան չ գործածել, միանգամայն վերացնելով աւելորդը²։ Մենք վերև չիտեցինք, որ ուղղագրութիւնը անհնարաբար, դիւրացնելու համար պէտք է բառերը (նոյն իսկ ոճերի որակը) համաձայնեցնել, հակիրճեցնել, և մենք օրինակ բերելը վրա բառը միայն. իսկ ի՞նչ կասէք աղաւ, դղաւ, նղաւ գերանունների մասին, լաւ չէ, որ գրութիւն սրտ, դղաւ, նղաւ. կամ յատարարիւններին, յարգողակ բառերի տեղ անարդիւնութեան, աջողակ, ինչպէս գործածում է Մշակը. ինչո՞ւ աւելորդ ծանրաբեռնել և ի գուր տիպ և տեղ գրաւել այդ վերացնելով ոչ, յ, տառերը, քանի որ առանց այդ տառերի՝ յիշելով բառերի նշանակութիւնը նոյն է մնում։ Գիտեմ կը լինին անհասկներ, որ մեր յայտնածին հակառակ օրինակներ կը բերեն, քակայն ես չեմ ժխտում, չկայ օրինակ առանց բացատրութեան... Հակառակ դէպքերում կարեւոր է բանասէր գրագէտների կողմից միջոցներ մտա-

ծել, համարամարդի առանձին կանոններ սահմանել, Ժամանակ է վերջապէս...

Գրիգոր Բաղասեանց

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

ԽԱԼԻԼ ԽԱՅԱՐ ՓԱՇՏԱՅԻ

Միւս ի նշանաւոր և ի գիտաւոր անձանց կաթողիկէայ Հայ Հասարակութեան Աղեքսանդրոյ՝ Խալիլ Խայաթ Փաշայն՝ որդի կենդանագիր պատկերը հոս ներկայացնենք, իւր ընտանիքը գաղատացի է ծագմամբ, ալ ինքը ծնեալ է ի Պէյրութ, և այն տեղի դպրացաց մէջ ընդունած է իւր դաստիարակութիւնը։

Հոն ի Պէյրութ՝ ի սկզբան վաճառականութեան հետամուտ եղաւ, բայց ապա պաշտօնի մտաւ մաքսատունը իւր գնահատող բոլոր Պէյրութի մաքսատանց։ Փանի մը տարի այն պաշտօնը վարելէ ետքը, տեսնելով որ իր շահու գիտաւորութեան չէր պատասխաներ, հրաժարեցաւ ու դարձեալ տոռաւինք դադար վաճառականութեան։ Եւ մի և նոյն տարին Բորդուգալի հիւպատոսարանը կ'ընտրէր զինքը իւր առաջին թարգման։

Խալիլ Խայաթ՝ անկեղծ, մեծանշան, առաւանձնաւ և սիրելի բնաւորութեամբ ոմն եղած է միշտ. անոր համար ալ ամեն տարին ամեն նուն համակրութիւնը վայելած է։ Զինքը ձանցողը կ'ըսեն, թէ անկարելի է հետը վերաբերութիւն ունենալ և սիրով չկապուել։

Աղքատասիրութիւնը այն աստիճանի տալ գործունէ է սրտին մէջ՝ որ ո՛վ ալ ըլլայ որ իր գիտութեանը դիմէ, ո՞նչայն ձեռք ետ չդառնար։ Պէյրութ եղած ժամանակը կը պատմեն թէ որ մը՝ գործոց ձախորդութեան պատճառաւ՝ մոմստութիւն մէջ ընկզմած փողոցը կը քալէր։ Ճամբան՝ տղոց տէր աղքատ մը առջեւը կ'ըլլէ. սա գիտնալով անոր առատաձեռն ընաւորութիւնը, կը մերձենայ ու լայագին աչք — «Խալիլ էֆէնտի» կ'ըսէ, խնայէ որդուցս և ինծի օգնութիւն մը բրէ»։ — Այն օրը Խալիլ էֆէնտի իւր քաւկին մէջ միայն երկու մէծտիտէ գրամ ունէր։ Սա կայն գրամը նուազութիւնը իրեն խափան չըլլար բարերարութիւն ընելու։ Աղաւաղորդին արտասուէր սիրտը կը ճմրէն. չի հանդուրժեր կը հանէ այն բոլոր բոլոր ունեցած իրկու մէծտիտէ գրամը կու տայ աղաւաղորդ աղքատ

1. Հայոց մէջ ես կ'առաջարկէի որ լինէր միջազգային լեզու «Արաբական» բարբառը, սակայն այդ մասին միւս անգամ։

2. Ըն գործածութիւնը կարեւոր ենք տեսնում այդպիսիպիսի — բանաստեղծական գրականութեան մէջ՝ վանկեր կազմելու և յանգր պահպանելու համար և առողջագրութեան ժամանակ։